

Ի՞նչ տեղեկատվություն է տնօրինում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տնօրինում է նախարարության ընդհանուր գործունեությանը, կրթության և գիտության ոլորտին, ԿԳՆ աշխատակազմի, աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, համակարգի կառույցների և մարզային ենթակայությամբ գործող հաստատությունների ծավալած գործունեությանը վերաբերվող տեղեկություններ: Մասնավորապես, դրանք վերաբերում են պետական հանրակրթական, բարձրագույն, հետբուհական, միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների և պետական կրթական ծրագրերի շրջանակում լիցենզավորված գործունեություն իրականացնող ուսումնական հաստատությունների գործունեությանը, պետական նմուշի ավարտական և այլ փաստաթղթերի հայտավորման և բաշխման աշխատանքներին, համապատասխան քաղաքականության և իրավական ակտերի մշակմանը, կրթության և գիտության բնագավառների բյուջետային գործընթացի իրականացմանը, լրացուցիչ կրթության զարգացման ծրագրերի մշակմանը, օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթներին, գիտական աստիճանաշնորհմանը, գիտական կոչումների շնորհմանը և այլն:

Նշված տեղեկությունները և դրանց վերաբերյալ իրավական ակտերը մշակում են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումները: Հրապարակման ենթակա տեղեկությունները տեղադրվում են ՀՀ ԿԳՆ (**edu.am**) պաշտոնական կայքում: